

Հարգելի գործընկերներ,

Ամեն անգամ, երբ այս կամ այն թեման առաջարկում եմ ձեզ «հեռակա» քննարկման համար, ինքս ինձ հարց եմ տալիս. «Իսկ ո՞ւմ է դա պետք»:

Իհարկե, հարցը «հռետորական» է, ինչպես հին անեկդոտում, և շատ պատասխաններ ունի, որոնք արտացոլում են նման «գրույցների» ինչպես անհրաժեշտությունը, այնպես էլ անպատեհությունը:

Մի կողմից, կարելի էր «հանգիստ խղճով» հրաժարվել այդ խնդիրներից (և դա հասկանալի կլիներ), որոնք, կարծես թե ուղղակի ազդեցություն չունեն մեր գոյության համար անձնավորված «պայքարի» վրա: Մյուս կողմից, գոյությունն ինքնին, բացի ֆիզիկական և ֆիզիոլոգիական ասպեկտից, ունի նաև հոգևոր-էթիկական բաղադրիչ, որը մարդուն տարբերում է մնացած կենդանական աշխարհից և ձևավորում մարդկային հասարակությունը: Իսկ դա արդեն մեր գոյության «կիրառական» ասպեկտն է:

Օրինակ`

- Մի թե ամոթի զգացումով չէք խոստովանում, որ հնադարյան (մոտ չորսհազարամյա) պատմություն ունեցող և տարբեր քաղաքակրթություններում գոյատևած մեր ժողովուրդը, ներկայումս գտնվում է նման անմխիթար վիճակում, երբ 20 տարուց ավելի է, որ նրա զավակները զանգվածաբար լքում են Հայրենիքը և գոյատևման համար «ապաստան» փնտրում օտար երկրներում:
- Մի թե ամոթի զգացում չի պատում մեզ, որ լինելով Յեղասպանության արհավիրքներով անցած ժողովուրդ, մեղմ ասած, կրկնակի արտագաղթի դրդեցինք Ադրբեջանից փախած մեր հայրենակիցներին, իսկ այժմ էլ նույն կերպ ենք վարվում Միրիայից ու Մերձավոր Արևելքի երկրներից եկած հայ փախստականների հետ:

Ստեղծված իրավիճակը ոչ միայն երկրի կառավարման մարմինների ներկայացուցիչների անփութության և անիրազեկության հետևանքն է, այլ նաև տեղական բնակչության քրեականացված հատվածի ցածր սոցիալ-կենցաղային մշակույթի:

- Մի թե հայ ժողովրդի համար վիրավորական չէ, երբ նրա զավակները վերջին 20 տարվա ընթացքում արտագաղթելով «կուշտ կյանքի» համար, զարմանալի հաճախականությամբ հայտնվում են «աղմկոտ» քրեական գործերի մասնակիցների թվում:
- Ձեզ տարօրինակ չի՞ թվում, որ մեր ժողովրդի ճնշող մեծամասնությունը ֆինանսական «վարձատրությամբ» վաճառում է իր ձայնը ցանկացած մակարդակի ընտրապայքարների ժամանակ, դառնում է մեզ համար խորթ զաղափարների ու էթիկայի նորմերի խոսափող, պրոպագանդում է ազգին խորթ

արժեքներ ու նպատակներ, որոնք հանգեցնում են հասարակության անդամների բնական ազատությունների սահմանափակմանը:

- Մի թե չեք տեսնում, որ պետական իշխանության որոշ ներկայացուցիչներ իրենց «շարքեր» բերելով իրենց իսկ հարազատներին, ընտանիքի անդամներին և մերձավորներին, ստեղծում են իրենց տեսակի վերարտադրման համակարգ երկար տարիների համար, և այդ փակ շրջանից «լույս չի երևում թունելի վերջում»:
- Դուք ինքներդ ձեզ հարց չե՞ք տալիս, թե «Ինչո՞ւ գործող օրենսդրության անկատարության, իշխանության համակարգում արհեստավարժության և պետական մտածողության բացակայության, ինչպես նաև մի շարք ղեկավարների քրեորեն պատժելի գործողությունների պատճառով, ժողովրդի ուսերին է դրված պետական գանձարանը լցնելու խնդիրը»:
- Չե՞ք կարծում, որ ժամանակն է վերջ տալ ազգային գերազանցության մասին կեղծ ամբոխահաճությանը և սոցիալական արդարության մասին խոսակցություններին խորհրդարանական «կերուխումների» մակարդակով, և կորպորատիվ-կուսակցական շահերի քարոզից անցում կատարել պետական հիմնախնդիրների լուծմանը:

Կարելի էր շարունակել վերոշարադրյալը, սակայն կարծում եմ՝ ավելորդ է...

Ումանք ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը տեսնում են պասիվ «ինքնախոհության» և «խոհանոցային» գրույցների մեջ, մյուսները՝ իշխանափոխության, այսինքն՝ «օտարներին» «յուրայիններով» փոխարինելու մեջ:

Շատ քչերն են «ախտորոշում» հասարակությունը և «չարիքը» տեսնում հենց իրենց մեջ: Ես նման մոտեցման կողմնակիցների թվում եմ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է «վերաճնվի», փոխի վերաբերմունքն ինչպես իր, այնպես էլ իր ընտանիքի, հասարակության, պետության և Հայրենիքի նկատմամբ:

Մենք, մեզանից յուրաքանչյուրը՝ անհատականություն է իր «Ես»-ով, որը ոչնչից չի առաջանում և ոչնչի չի վերաճվում, այն ծնվում է մարդու հետ և պահպանում է իր գոյությունը նրա մեջ մինչև կյանքի վերջ: «Ես»-ը, առաջին հերթին, բնական ազատությունն է՝ ծանրաբեռնված պատարականություններով մարդկային հանրության առջև: Այն պետք է վերափոխել «Մենք»-ի...

Այս կապակցությամբ, անհրաժեշտ եմ համարում պարբերաբար ձեր ուշադրությանը ներկայացնել հետաքրքիր նյութեր/թեմաներ՝ հասարակության մեջ մարդու դերի և նշանակության վերաբերյալ:

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն